

# Շիրակի մարզ



Շիրակը Հայաստանի հյուսիսային մարզն է: Իր մարզկենտրոնը Գյումրին է: Շիրակի շրջանը հարուստ է տեսարժան վայրերով: Գյումրի (նախկինում՝ Կումայրի, Ալեքսանդրապոլ, Լենինական ) – Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքն է, որն գտնվում է Հայաստանի հյուսիս արևմտյան մասում՝ Շիրակի մարզում, Երևանից 126 կմ հեռավորության վրա: Տարածքը 3626 հա է: Կլիման ցամաքային է, համեմատաբար տաք ամառներով և ցուրտ ձմեռներով: Տարեկան տեղումները 500 մմ են: Գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Վերջին ուժեղ երկրաշարժը տեղի է ունեցել 1988-ի դեկտեմբերի 7-ին: Բնակչության մեծ մասը հայեր են: Ապրում են նաև ռուսներ, հույներ և եզդիներ: Գյումրին ունի մոտավորապես 200.000 բնակիչ:

# 2008թ-ին «ՅԿՅ»-ի կողմից վերանորոգման համար առաջադրվող դպրոցների մասին տեղեկություններ:

## Շիրակի մարզ, գյուղ Ձորաշեն

1. Շին. նախահաշիվ կա: Այն կազմել են մարզի շին. մասնագետները:
2. Ես տեսել եմ դպրոցը և մանրամասն ուսումնասիրել եմ նախահաշիվը:
3. Նախահշվում նախատեսված են հիմնական աշխատանքները:
4. Դպրոցը բաղկացած է երեք մասնաշանքից: Կանտրոնականը 2 հարկանի է: Իսկ կողքի կից մասնաշենքերը մեկ հարկանի են:
5. Մեր կողմից վերանորոգման համար առաջադրվել է աջակողմյան տարականների մասնաշենքը ամբողջությամբ:
6. Տանիքը լավ վիճակում է, ունի մասնակի վերանորոգման կարիք: Այն ազբոշիֆրից է:
7. Դպրոցի էլեկտրականությունը լավ վիճակում է: Վերանորոգվող մասնաշենքի էլ.լարերը ավելի կուժեղացվեն:
8. Դպրոցը ջեռուցվում է վառարաններով: Յետագայում կջեռուցվի էլեկտրականությամբ: Գյուղում գազ չկա:
9. Հատակները նախատեսված է, մասամբ վերանորոգման և մասամբ ամբողջությամբ վերափոխման:
10. Ջուգարանները ներսում են և վերանորոգվելու են: Դպրոցում ջուր կա:
11. Դռներ վերանորոգվելու են:
12. Պատուհանները բավարար վիճակում են, անհրաժեշտ է մասնակի վերանորոգման:
13. Դպրոցը կառուցվել է 1990թ. Ռուս շինարարների կողմից:
14. Գյուղում ապրում են 273 բնակիչ:
15. Դպրոցում սովորում են 73 աշակերտ
16. Դպրոցում աշխատում են 17 ուսուցիչ և 13 տնտեսական աշխատող:
17. Երևանից մինչև Ձորաշեն 175կմ է:

Իմ կարծիքով դպրոցը անհապաղ անհրաժեշտ է վերանորոգել: Դպրոցի տնօրենն է պրն.Գարեգին Շաբոյանը: Իմ կարծիքով վերանորոգումից հետո այն լավ կպահպանեն:

Կազմեց՝ Ս.Նալբանդյանը  
2008թ.03.09





